

ԱՄԵՐԻԿԵԱՆ ԶԻՆԱԿԱՆ
ՕԺԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ՝ ԲԱՆԱԿԻՆ

Լիբանանեան բանակը երէկ ստանձնեց ամերիկեան զինուորական օժանդակութեան մասնաբաժին մը եւս՝ «Էմ. 113» տիպի 118 վրա-հալատներ:

Օժանդակութեան յանձնումի եւ ստանձնու-մի գործողութեան ներկայ եղան դեսպան Ռի-չըրտ ձուլ եւ բանակի բարձրաստիճան սպաներ: Ճոնզ յայտարարեց. որ այս օժանդակու-թիւնը մաս կը կապմէ բանակի վերասարքա-ւորման ընդհանուր ծրագիրին: «Ձօր. Էմիլ Լա-հուտի դեկալարութեամբ, լիբանանեան զին-ւորական հաստատութիւնը նշանակալից քայ-լեր առած է ինքզինք բարեփոխելու ուղղու-թեամբ»: ըսաւ ան:

ՌԷՅԶՄԱՆ ՊԻՏԻ ՓՈՐՁԷ ՄԵՂԱՑՆԵԼ ԱՄՍԱՆԻ ԶԱՅՐՈՅԹԸ

ԵՐՈՒՍԱՀԷՄ, 10 (ՌԷՕԹԸՐ).- Իսրայէլի նախագահ էգզր Ուալցման Հինգշարթի օր յայտարարեց, որ կը ծրագրէ Յորդանան այցելել: Այցելութիւնը պիտի գու-գաղկպի պահու մը, երբ յորդանանցիք գալորացած են, որովհետեւ Իսրայէլի վարչապետ Պենիամին Նեթանիա-հուի որդեգրած արմատական քաղաքականութիւնը հրէական պետութիւնը կը թշնամացնէ ամէնէն մօտիկ արար դրացիին:

Ուալցմանի այցելութեան յուրը հրապարակուեցաւ, երբ լրատու աղբյուրներ կ'արտայայտուէին Հիւսէյն թա-գաւորի հետ յարաբերութեանց մէջ նկատուած տագնա-պի մը մասին: Հիւսէյն թագաւորը արար միակ դեկա-վարն էր, որ կացութիւնը վտանգուած էջը տեսած Նե-թանիահուի ընտրութեամբ անցեալ Մայիսին, սակայն ան սկսաւ հրապարակաւ քննադատել Նեթանիահուն՝ երուսաղէմի փապուղիին բացումէն ետք:

Իսրայէլի կառավարութեան այս կեցուածքը գալրոյթ պատճառեց նաեւ Յորդանանի պաշտօնյոյցի բնակիչներուն:

Ուալցման կ'ուզէ գործօն դերակատարութիւն ունե-նալ չրջանի դիւանագլուխական կեանքին մէջ, երբ Նե-թանիահուի կապերը կը վատթարանան արար դրացիներ-ուհ հետ: Քանի մը օր առաջ, ան իր բնակարանին մէջ ընդունեց պաղեստինցի դեկավար Շասէր Արաֆաթը, իսկ հիմա կը ծրագրէ Յորդանան այցելել: Ան երկու-շարթի օր պիտի այցելէ նաեւ Եգիպտոս: Նեթանիահուի գրասենեակը, ըստ մամուլին, գոհ չէ նախագահին քաշ-լերէն, թէ եւ Ուալցման կը չեչտէ, որ այլ պիտի քննադա-տութիւն չէ հասած իրեն:

«Լ. ՅՈՒՀԷԼԱՆԻՒՄԵԼԱՆ + 30»Ի ՀԱՐՅ

ԴԱՏԱՎՈՐՈՒԹԵԱՆ ՄԻՏՈՒՄՆԱԴՈՐ ԶԳԶԳՍԱՆ ՓԱՍՏ

Մօտաւորապէս 2.5 միլի տեւած կամայական եւ ան-բացատրելի ընդմիջումէ ետք, Չորեքշաբթի օր վերսկը-սած է «Վահան Յովհաննիսեան + 30»ի դատավարու-թիւնը եւ նիստին, աւելի յստակօրէն քողապէրծուած է դատավարութիւնը ձգձգելու դատաւորներու միտումը: Դատաւարութիւնը ընդմիջումէ եր 22 Յուլիսին, որովհետ՝ դատաւորը հիւանդ էր: Ան պատմած է, որ ինք հիւս լղանդ մնացած է մինչեւ 10 Սեպտեմբեր: Յետոյ, մեղադրեալներէն Օֆիկ Մարեանի արտօնութիւն տրուած է դարմանուելու համար Մոսկուա երթալու: Օ. Ասրեան եւ իր փաստաբանը ըսած են, որ ատիկա անըն-

րաժեշտ չէր, իսկ մեղադրեալին հիւանդանոց կեցու-թիւնը տեւած է միայն... 2 օր: Անուց վկայութենէն կար-ելի է հետեւցնել, որ դատաւորը մեղադրեալին պար-տաւրած է աւելորդ դրամանում մը, պարզապէս ընդ-միջումը երկարաձգելու համար:

Ընթացիկ հարցաքննութեանց պահուն, Օ. Ասրեան պահ մը դուրս եկած է դատարանի դահլիճէն: Երբ անոր բացակայութիւնը տեւած է երկար, ընկ. Վահան Յով-հաննիսեան կատակած է ըսելով. «Կ'երեւ ընտրու-թեանց երկրորդ փուլը կը սպասէ»:

ԹՈՐՈՐՈՅԷՆ ԲՈՂՈՔԻ ԶԱՅՆ՝ ԲՈՆԱՐԱՐՆԵՐՈՒՆ ԴԷՄ

Թորոնթոյն տրուած տեղեկագիրէ մը կ'իմանանք, որ անցեալ Ուրբաթ, 4 Յուլիմբերին, 7. 3. 7. շրջանի Մարմինին նախաձեռնութեամբ 7այ Կեդրոնի մէջ տե-ղի ունեցած է հաւաք մը, որուն ընթացքին 7այաստա-նի նախագահական ընտրութիւններուն եւ անոնց հե-տեւած դէպքերուն մասին զեկուցում տուած է 7. 3. 7. Բիւրոյի անդամ ընկ. Վիգնէ Յովսէփեան եւ ներկայա-ցուցած է 7. 3. 7այնկցութեան կեցումաձքը:

7այաքին անունով բողոքի յուշագիր մը յղուած է Բարգէն Արարքեանի, Գառնիկ Յարութիւնեանի (Սահ-մանարական դատարանի նախագահ) եւ հաշատուր Պեգիրժեանի (4. Ը. Յ.ի նախագահի). բողոքագիրը կը դատապարտէ ժողովրդավարութեան ոտնակոխումն ու ապօրինի արարքները եւ կը պահանջէ քաղաքա-կան գործիչներու ազատ արձակումը, ընտրութեանց ծիշդ արդիւնքներուն հրապարակումն ու ժողովրդա-վարութեան վերահաստատումը (մանրամասնութիւն-ները՝ հետագային):

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ

Այսու կոչ կ'ընենք օտարահայատակ մ'եր այն հայորդիներուն, որոնք երկրորդ առիթով դիմում ենք կայացուցած էին լիբանանահայատակութեան, հերկայանալու Ազգ. Առաջնորդարան, ստանալու համար Առաջնորդարանի կողմէ ճշդուած իրենց թիւերը, թղթածրարներու համապատասխան վճար-ման ստացագիրով:

Յայտենք, որ այս թիւերը կայ չունին պետու-թեան կողմէ յառաջիկային տրուելիք թիւերուն հետ:

Բոլոր անոնք, որոնք տակաւին չեն հերկայացած, վԵՐՋԻՆ ԱՌԻԹ Եւ վԵՐՋԻՆ ՊԱՅՄԱՆԱԺԱՄ՝ Ուրբաթ 11 Հոկտեմբեր, ժամը 15հ 18, Ազգ. Առաջ-նորդարանի կից գտնուող սրահը:

ԿԻԻԱՆ ԱԶԳ. ԱՌԱՋՆՈՐԿԱՐԱՆԻ

ՄԱՆՕԹ.- 1.- Կը խնդրուի հերկայացողներէն իրենց հետ ունենալ անձնաթուղթի լուսապատկե-նք. իսկ երէ փոխանորդարոց պիտի հերկայանան փոխանորդին եւ հոյատակութեան դիմում կատա-րողին անձնաթուղթի լուսապատկենք:

2.- Ազգայիներէն կը խնդրուի յարգել վերոյիշ-եալ պայմանաժամը: Բոլոր անոնք, որոնք. կ'ան-տեսեն այս պայմանաժամը, հետագային իրենք պի-տի կրեն որեւէ սխալի պատասխանատուութիւնը:

ԱԶՏԱԿ

ՈՐԱԹԵՐԹ

AZTAG QUOTIDIEN POLITIQUE ET LITTÉRAIRE
أزதாக جريدة يومية سياسية وأدبية - البوابة للحرية - إيشادرويشان

1000 L.Ո. 7ԻՐԴ՝ՏԱՐԻ, ԹԻՒ 183 (19483) ՈՒՐԲԱԹ, 11 ՀՈԿՏԵՄԵՐ 199610 ԷՁ

Facilités
Incredibles

Prix
Imbattables

Credit sur 10 mois sans intérêt à partir de 30\$ par mois

Tapis: Persan - Chinois - Européen - Moquettes - Papiers peints
Ouvert les Dimanches demi journée

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՄԷՁ

ԻՇԽԱՆԱԴՈՐՆԵՐՈՒ ՄԱՆՐ ՍՐԲԱԳՐՈՒՄՆԵՐԸ ԶԵՆ ԴԱՐՄԱՆԵՐ ՀՍԿԱՅ ԱՆԱՐԴԱՐՈՒԹԻՒՆԸ

Հայաստանի իշխանու-թիւնը խճա խմբակն յայտ-նապէս կը փորձէ քայլ առ քայլ ետդարձ ընել այն ճամբէն, որ յարդարուած էր լուսարարքներով, ապօ-րինի՝ ձերբակալումներով՝ եւ լուսատիրական այլ արարքներով, սակայն այդ բոլորը անպարտութեան վկայական չեն կրնար բե-րել անոր:

Երեւանէն տրուած հե-ռագրալուրեր կը յայտնեն, որ 25 Սեպտեմբերի դէպ-քերէն ետք ձերբակալուած Մէլրան Աւագեան եւ Շա-ւարշ Քոչարեան ազատար-ձակուած են: Ազգ. Անվը-տանցութեան նախարար Սերժ Սարգսեանի համա-ձայն, այժմ միայն 13 հոգի բարձրագուծ նաեւ ներ-անոնց մասին մեղադրա-գիրներ կան:

Ա.Ժ.Մ. ԿԸ ՊԼԱՆԱՋԷ

Վազգէն Մանուկեանի գլխաւորած Ա.Ժ.Մ. Կու-սակցութիւնը պաշտօնա-կան դիմում ներկայացու-ցած է դատախազութեան, պահանջելով, որ իր ըու-նեցրտուած կեդրոնը եւ անկէ խլուած իրերն ու գույ-քերը վերադարձուին: Պաշ-

տօնական կողմապետին գողտնի մաս կը կազմէին փաստաթուղթեր, ուր ամ-փոփուած էին նախագա-հական ընտրութեանց ար-դիւնքները...

Մինչ այդ, Ա.Ի.Մ. վեր-ստանձնած է իր կեդրոնա-կան գրասենեակը, որ աւե-

րակ եւ կողմապետած վի-ճակ կը պարզէ: Պարոյր Հայրիկեան Չորեքշաբթի օր մամուլը ասուլիս մը տուած է կեդրոնին մէջ եւ լրագրողներուն ցոյց տուած «Վանօ Սիրադեղ-եանի ստորագրեաններու ձեւքին գործք», որոնցմէ լուսանկարներ դրկած է վանդին: Ըստ Հայրիկեա-նի, կեդրոնը կրած է 40 հա-զար տոլարի վնաս, ըստ նախնական գնահատում-ներու: Կորսուած են ան-ւանացանկերը բազմահա-զար ուրբերու, որոնց օժա-նկ ունեցին կը տրամա-դրէր Ա.Ի.Մ. Ան ռսած է, որ դատարան պիտի դիմէ եւ հատուցում պիտի պա-հանջէ: Դատական հարց պիտի յարուցուին նաեւ ներ-քին գործոց նախարարու-թեան կարգ մը պաշտօն-եաններուն դէմ, գորս Ա.Ի.Մ. ի ծեծուած անդամ-ները ճանչցած են:

Խօսելով բանտարկեալ-ներու հարցին (Ա.Ի.Մ. ին բանտարկուած են 15 հո-գի), Պարոյր Հայրիկեան գարմանք յայտնած է, որ «գլխաւոր մեղաւորը» նկատ-ւող Վազգէն Մանուկեան կը մնայ ազատ, մինչ ու-րիշներ բանտն են: «Երբ

Վ. Մանուկեան դուրսն է, միւսները ինչէ՞ր բանտը կը պահուին», հարց տուած է Ա.Ի.Մ.ի դեկավարը:

«ՆՄՆԸՄԹԻ»

ԿԸ ՊԼԱՆԱՋԷ

«Էմըսթի Ինթըրնէշը-

նը]], մարդկային իրա-ւունքներու պաշտպան մի-ջազգային ծանօթ կազմա-կերպութիւնը, պաշտօնա-կան հաղորդագրութեամբ մը մտահոգութիւն արտա-յայտած է Հայաստանի մէջ ընդդիմադիրներու կամա-յական ձերբակալումնե-րուն եւ խոչտանգումին մասին եւ պահանջած՝ որ քննութիւն բացուի այս իրադարձութեանց շուրջ:

Իշխանութիւններուն վարմունքը անընդունելի եւ դատապարտելի նկատե-լով, «Էմըսթի» կասկածի տակ կ'առնէ ընդդիմադիր-ներուն ուղղուած մեղադ-րանքներուն ճշմարտու-թիւնը: Աւելին, յայտարա-րութիւնը կ'անդրադառ-նայ բանտարկուած ընդդի-մադիրներուն բանտային տանջանքներու իրողու-թեան, մասնաւորելով Ադասի Արշակեանի վկա-յութիւնն ու այն տեղեկու-թիւնները՝ ըստ որոնց, ընկ. Ռուբէն Յակոբեանի ականջին թմբուկը պայ-թած է եւ ան ունի ծանր վէրքեր: «Էմըսթի» կ'ըսէ, թէ ինք անարկուծիւն չու-նի օրէնքի պահպանման իշ-խանութեանց գործին մա-

սին, սակայն բազմիցս իշ-խանութեանց դիմած է, նկատելով տալով որ օրինա-պահ մարմինները վատ վե-րաբերմունք կը ցուցաբե-րեն, իսկ երկու գլխաւոր դատավարութիւններու անարդար ընթացքը մտա-հոգիչ է:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ

ՖՐԱՆՍԱ ՊԱՏՐԱՍ՝ ՆՊԱՍՏԵԼՈՒ ԺՈՂՈՎՐԴԱՎՈՐՈՒԹԵԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ

Կ'ԸՍԷ ԷՐՎԷ ՏԸ ՇԱՐԷԹ

Ֆրանսայի արտաքին գործոց նախարար էրվէ Տը Շարէթ Չորեքշաբթի օր հասած է Երեւան եւ ընդուն-ւած՝ Լ. Տէր Պետրոսեանի ու այլ անձերու կողմէ, կը յայտարարէ «Արմէնփրէս»:

Քննարկուած են Ֆրանսա - Հայաստան գործակցու-թեան դաշտերն ու Ղարաբաղի տագնապին զարգաց-ման ընթացքը: Տը Շարէթ յայտարարած է, որ Ֆրանսա միշտ կը մնայ Հայաստանի կողքին, անոր տեսակէտնե-րը կը պաշտպանէ միջազգային առեաններուն մէջ եւ պատրաստ է սատարելու ժողովրդավարութեան զար-գացման: Ան ռսած է նաեւ, որ ինք վէճ չունի Լ. Տէր Պետրոսեանի հետ:

Տը Շարէթի կիւնը, որ անոր կ'ընկերանայ այս այցե-լութեան առիթով, խոր գոհունակութիւն արտայայտած է Հայաստանի հողին վրայ գտնուելուն առիթով, յայ-տարարելով, որ իր մեծ հայրը հայ է:

«ԿԵՑՈՒԱԾՔ ՈՒՆԵՃԷՔ, ՊԱՐՈՒՆ ԴԱՏԱԽԱՋ»

Հայրենի 15 գրողներ, ակադեմականներ, արուես-տագէտներ եւ հասարակական գործիչներ երէկ յուշա-գիր մը յղած են Հայաստանի գլխաւոր դատախազ Ա. Գիւրգենի, անոր յիշեցնելու համար, թէ նախագահն ու դատախազը՝ ինք, լուծիւն պահած են պաշտպանու-թեան նախարար Վազգէն Սարգսեանի այն յայտարա-րութեան նկատմամբ, որ ան ռսած էր, որ ուժային նա-խարարութիւնները պիտի չարտօնէին որ Վազգէն Մա-նուկեան նախագահութեան ամօրին հասնի, մինչեւ իսկ թէ՛ ան ապահովէր քուէներուն 100 առ հարիւրը:

Յուշագիրը ստորագրողներուն կարգին են Սիլվա Կպուտուկեան, Երեմ Ջէյթնուցեան, Հայրիկ Մուրա-տեան, Սարգիս Մուրադեան, ընկ. Ռուբէն Յովսէփեան եւ ընկ. Ալվարդ Պետրոսեան: Անոնք կը նշեն, որ այս լուծիւնէն կարելի է հետեւցնել, որ ուժային կառույցնե-րը եւ ոչ թէ՛ Ազգային ժողովն ու այլ սահմանադրական

հաստատութիւնները կը դեկավարեն երկիրը, ինչ որ մտահոգիչ է եւ անընդունելի: Հայրենի մտաւորական-ները կը պահանջեն, որ դատախազը կեցուածք ճշդէ եւ իր գնահատականը տայ Վ. Սարգսեանի այդ յայտարա-րութեան մասին:

ԵՐԵՒԱՆԻ ՄԷՁ

ՈՒՄՈՅ ԴԵՄՊԱՆԸ ԸՆԴՈՒՆԵՑ 3. 3. Դ. ՆԵՐԿԱՅԱՑՈՒՑԻՉՆԵՐ

Հ. Յ. Դ. Հայաստանի Գերագոյն Մարմինի անդամներ՝ ընկերներ Հրայր Կարապետեան, Յովիկ Աղապարեան եւ Գագիկ Մկրտչեան երէկ այցելութիւն մը տուած են Երեւանի մօտ Ռուսիոյ դեսպան Ռոնովի: Գերագոյն Մարմինի անաշարկով կայացած այս հանդի-պումին, քննարկուած են այժմեական հար-ցեր: Ընդձուած է հարցերու լուծման մէջ ու-ժի գործառնութեան մերժումը, այլ օրէնքի եւ սահմանադրութեան կիրարկումը:

«ԻՇԽԱՆՈՒԹԻՒՆՆԵՐԸ ԿԸ ՅԱՊԱՂԻՆ...»

«Երեւան» տեղեկատուական կեդրոնը կարճ հեռագրալուրով մը կը յայտնէ հետեւեալը.

Դաւիթ Շահնազարեան յայտարարած է, որ «Լ.Ղ. Հ. անվտանգութեան եւ հիմնահարցի կարգաւորման միակ երաշխիքը Հայաստանի ժողովրդավարութիւնն է, իսկ այն կարող է հաստատուել միայն քաղաքական համա-ձայնութեան կայացմամբ՝ առանց նախապայմանների երկխօսութիւն սկսելով»:


Վազգէն Մանուկեանն իր վերջին բոլոր ելոյթներում հաստատել է իր պատրաստակամութիւնը, վերջին քայ-լը իշխանութիւններին է, որոնք յապաղում են»:

ԷՐՊԱՔԱՆԸ ՎԱՐ ԱՌՆԵԼՈՒ ՄԻՏՈՂ ՅՐԴ ԲԱՆԱԶԻ

ԱՆԳԱՐԱ, 10 (ՌԷՕԹԸՐ).- Թուրքիոյ «Մայր Հայրե-նիք» ընդդիմադիր գլխաւոր կուսակցութիւնը յայտա-րարեց, որ խորհրդարանէն պահանջած է Նեճմէտտին էրպաքանը վար առնելու բանաձեւ մը պատրաստել: Այս շարթուան մէջ երրորդ անգամ ըլլալով, ընդդիմա-դիր կուսակցութիւնները վարչապետը վար առնելու փորձ կը կատարեն:

«Մայր Հայրենիք» բանաձեւ մը յղած է խորհրդա-րան նշելով, որ Լիպալ այցելելով, էրպաքան նուաւսա-րուցած եւ անարգած է Թուրքիան, որովհետեւ լու-մնացած է Մուամմար Քադաֆիի անարպական ոճին դիմաց:

Շարաթասկիգրին, ընդդիմադիր երկու այլ կուսակ-ցութիւններ էրպաքանի կռաւարութիւնը վար առնե-լու դիմում ներկայացուցին խորհրդարանին, որ հաւա-նարար երեքը միացնելով նիստի մը հրաւիրէ երեսփո-խանները:



ՄԱՐԱՏՈՆԱ՝ ԱՍՏՂԻՆ ԲԱՐԴՈՅԹՆԵՐԸ ԵՒ ԲԱՐԴՈՒԹԻՒՆՆԵՐԸ



Մարատոն

Դժուար բան է կեանքին մէջ աշխարհահռչակ դառնալ եւ կարենալ պահել հաւասարակշռութիւնը՝ մտային, շարաքերական թէ պարզապէս իբրեւ մարդ էակ։ Բաղադրական անձնատրոսթիւններէն մինչեւ մշակութային կեանքին մէջ պատմութիւն կերտած մարդիկ, իրենց անձնական կեանքին մէջ, միշտ ալ վերի-վայրումներ ունեցած են։ Այսօր, շատեր իբրեւ օրինակ կ'ակնարկեն Չորչիլի կամ Պեթոնֆելտի պէս մեծերու կեանքէն դրուագներու։

Ծառափողը կ'երկարի մինչեւ մարզական աշխարհ, ուր մարզիկներ աստղ դառնալու զուգահեռ կը սկսին բարդոյթներ տառապիլ։ Նիւթականը եւ միշտ աւելին ունենալու մարմալը մեծ դեր ունի այս վիճակին ստեղծման մէջ։

Ծառեր կը լինեն Պրագիլիոյ ճժայնակներու աստղերէն կարիւնչան, որ հռչակէ հռչակ թռչելէ ետք, ֆուտպոլէն հեռացաւ եւ ընկղմեցաւ ոգելից ըմպելիներու ծովում մէջ, որ գիճը հասցուց մահուան։

Պարագան մոյմը չէ Փելլի, որ թէւ շատ աւելի հրուանակէն, քան պահեց իր հաւասարակշռութիւնը եւ ծայրալեզուութիւններու չգնաց։ Փաստօրէն, ան այսօր ծանօթ մերկայութիւն մըն է աշխարհի մէջ, եւ ֆուտպոլի գագաթնակէտը նուաճելէ ետք, դարձած է Պրագիլիոյ մարզական հարցերու մախարարը։

Յիշեալ երկու պրագիլիացիներուն «խառնուրդ» է գերմանացի կերտ Միլլերի պարագան։ Ան նաեւ Կարիւնչային պէս դարձաւ ալքոլամոլ, քսց շնորհիւ իր ընկերներուն եւ յատկապէս Պեքընստուրիին, յաջողեցաւ ձեռքազատիլ այդ «գերութենէն» եւ վերադառնալ աշխարհ։ Ան դարձաւ Պայէրն Միւնխի օգնական մարզիչներէն մէկը։

Տարբեր է եւ փտանգաւոր Մարատոնայի պարագան։ Ան տարիներ շարունակ եւ մինչեւ վերջերս կը հմայէր ֆուտպոլի սիրահարները, դաշտին վրայ հրաշքներ գործելով։

Երիտասարդ տարիքին յաջողութիւններու հասած եւ փառքի տիրացած, Մարատոնայ այժմ անցած էր կարմիր գիծը, խթանիչ դեղեր եւ թմրեցուցիչ գործածելու հետեւանքով։

Ինչպէ՞ս կարելի է բացատրել անոր այս վիճակը։ Ինչպէ՞ս կ'ըլլայ, որ ֆուտպոլի աշխարհի այս հերոսը, որ հազարաւոր երիտասարդներ տպաւորած է, ինչպէս է այդ փտանգաւոր «երազային» աշխարհին մէջ։

Անհանգիստ է վեր ան դաշտերէն հեռու է եւ կը փորձէ դարմանուիլ։ Ան քանի մը շաբաթ վայելեց Զուիցերիոյ ընծայած հանդարտ բնութիւն ու կանաչ լեռները։ Ասկայն ըստ երեւոյթի դարմանումը կ'ուշանայ եւ այլ բարդութիւններ ի յայտ եկած են։

Արդարեւ, նկատուած է, որ դեղերուն գործածութեան հետեւանքով, անոր ուղեղին մէկ բաժինին մաշկը մաշած է եւ կրնայ պատճառ դառնալ ներքին արիւնահոսութեան։

Ան յաճախ խոստովանած է, որ կը փորձէ դարմանիլ, սակայն չի կրնար ինքզինը հանդգնել եւ կամքին տէր ըլլալ։

Արդեօք ան խթանիչ դեղերու ազդեցութեան տակ սիրագործութիւններ կը կատարէր։

Իբրեւ ֆուտպոլիստ՝ գրեթէ անարտած է Մարատոնայի կեանքը, սակայն ըստ երեւոյթի, աշխարհի դուռներն ալ կը թուին փակուելու մօտ։

ՃՈՐՔԱՅԷՖ ԵՒՍ ԲԱԺԻՆ ՈՒՆԵՅԱՒ

Յուլիոյի բարեկամական մրցումի մը ընթացքին, ֆրանսայի ազգային խումբը «Փարք Տը Փրէնս»ի մէջ դաս մը տուաւ Թուրքիոյ եւ չուրվ 29 հազար հանդիսատեսներու ներկայութեան, նշանակեց չորս անպատասխան կոյրեր։

Պարսկոնայի մարզիկներէն Լորան Պլան, որ յարձակող յետսպահ մըն է, 33րդ վայրկեանին, խմբապետ Տիտիէ Տեշանէն երկար փոխանցում մը ստանալէ ետք թրքական օֆ-սայտէն փախուստ տալով, նշանակեց մրցումին առաջին կոյր։ Պլան, որ ազգային խումբին հետ իր 35րդ


ստացաւ ետ-

րի ծորքայէ ֆէնէլ լոյով մը պարտութեան մատնեց բերդապահ Ռեքալերը։

50 րդ վայրկեանին, նոյնինքն Ճորքայէ Թոր 2 ինչ տօնին Զիտանի հետ համեմատելի խաղարկութիւն ունէր, նշանակեց երրորդ կոյր։

Իսկ 71րդ վայրկեանին զաշտ ներկայացած Ռոպէլ Բիլէս, աւարտ մրցումի տէն ետք վայրկեան առաջ, լոյով մը նշանակեց ֆրանսացիներուն 4րդ կոյր։

Յրանսա զաշտ ներկայացաւ հետեւեալ քայլէ եւ փախուստ տուաւ (Թուրքի Բիլէս, 71րդ)։



Դորքայէ, որ նշանակեց 3րդ կոյր։

Թէլզ - Բրիսթիան Բարաժպէս, Ալէն Կոմա, Լորան Պլան, Լիլիան Թիւրամ (Մարթին Զեթու, 75րդ) - Սապրի Լամուշի (Վենսան Բանտեյա, 23րդ), Տիտիէ Տեշան, Զինէտտին Զիտան, Ռէյնալտ Փետրոս (Յրանք Կաւա, 65րդ) - Եուրի Ճորկայացաւ հետեւեալ քայլէ եւ փախուստ տուաւ (Թուրքի Բիլէս, 71րդ)։

ՊՐԵՄԸՆ ՕԺՏՈՒԵՑԱԻ ՆՈՐՎԵԿԻԱՅԻ ՅԱՌԱՋԱՊԱՀՈՎ ՄԸ

Նորվեկիացի յառաջապահ Հաւարտ Ֆոլքեց իր կազմը՝ Աարհուսը եւ միացաւ գերմանական Ա. դասակարգի կազմերէն Վերտոր Պրեմերին։

Անոր փոխանցման դուռը չ'ստակացաւ, բայց Պրեմեր յայտնեց, թէ ան մինչեւ 2000 թուական պիտի կրէ ակումբին շապիկը։

Ֆոլքի Պրեմեր փոխանցումը տեղի ունեցաւ արժանութիւնի միջազգային միջնապահ Ռոտտօֆ Էսթեպան Բարտոնի ձամուրկին փոխ տրուելէն օր մը ետք։ Ռոտտօֆ մինչեւ այս եղանակի աւարտը փոխ տրուեցաւ Համպուրկի Պրեմեր պիտի գանձէ 2.5 միլիոն տոլար։

Աւստրիացի փէլմէյքըր Անտրէաս Հերցոկի Պայէրն Միւնխիէն Պրեմեր փոխանցումէն ետք, Բարտոնս դուրս մնացած էր հիմնական կազմէն։

Պրեմերի պատասխանատուները յայտնեցին նաեւ, թէ իրենց նոր մարզիկը՝ Ֆոլ, յառաջիկայ Շաբաթ օրուան մրցումին պիտի չ'կարենայ մասնակցել, որովհետեւ անոր թուղթերը տակաւին չ'են մամողջացած։

ՀՈԼԱՆՏԱՅԻ ՍԹԻՎԸՆՉ՝ ՇԱԼՔԷ 04Ի ՄԱՐԶԻՉ

Գերմանիոյ Ա. դասակարգի կազմերէն՝ Շալք 04 համաձայնութիւն մը կնքեց հոլանտացի մարզիչ Հիւսկ Սթիվընսի հետ։

Նախապէս Ռոտա Բերքրատ խումբին մարզիչ Սթիվընս եղած է Հոլանտայի ազգային խումբին յետսպահներէն։ Ան մարզած է նաեւ Փ. Ս. Վ. Այնտհոյքը։ 42 տարեկան Սթիվընսի անունը առաջարկուած էր Եոհան Տր Բոքի կողմէ, որ անցեալ տարի մաս կր կազմէր Ռոտային։ Այլ հոլանտացի մըն ալ՝ Եուրի Մուլտոր Շալքի աստղերէն է։

Սթիվընս անցեալ տարի յաջողեցաւ Ռոտայի անծանօթ մարզիկներով կազմը Եուրոպա հասցնել։

Նշենք, թէ նախկին մարզիչը՝ Եւրոպ Պերկոր (51 տարեկան) պաշտօնանկ եղած էր իր կոշտ ընտելութեան պատճառով։ 51 տարեկան Պերկոր երկու տարի առաջ յաջողեցաւ խումբը փրկել Բ. դասակարգ փոխադրուելէ, իսկ անցեալ տարի, 19 տարեկան ի վեր, առաջին անգամ ըլլալով, անոր պաշտօնէն Եու. Է. Է. Ա. ի բաժակի մրցաշարքի տոմ մը։

ՀՈԼԱՆՏԱՅԻ ԱՍՈՅԵԱՆՈՒԹԻՒՆ

ՖԷՅԷՆՈՒՐՏ ՌՈԹԵՐՏԱՄ ՄԵԱՅ ՊԱՐԱԳԼՈՒԽԻ ԴԻՐՔԻՆ ՎՐԱՅ

Հոլանտայի ախոյեանութեան 9րդ հանգրուանի մրցումներուն, պարագլուխի դիրքը գրաւող Ֆէյէնուրտ Ռոթերտամ պահեց երկու կէտի իր առաւելութիւնը՝ իր անմիջական յաջորդին՝ Փ. Ս. Վ. Այնտհոյքին վրայ, երբ 3 - 1 արդիւնքով պարտութեան մատնեց Կրոնիւկընը։

13րդ վայրկեանին, Ռոնալտ Բեօման փէնալթիով նշանակեց Ֆէյէնուրտի առաջին կոյր, բայց 50րդ վայրկեանին, պրագլուխի Մակնո նշանակեց հաւասարութեան կոյր։ Կասթոն Թաուներթի եւ Փապլէ Սանչէս նշանակեցին Ֆէյէնուրտ յաղթանակի կոյրերը։

Կրոնիւկըն մրցումը աւարտեց տասը մարկիկով, երբ 73րդ վայրկեանին Եան Վինհոֆ կարմիր քարտ մը ստացաւ։

Բ. դիրքը գրաւող Փ. Ս. Վ. Այնտհոյքը 2 - 0 արդիւնքով դժուար յաղթանակ մը տարաւ Թվենթէի վրայ։

Կը բացակայէին կարգ մը բանալի մարկիկներ։

Թվենթէի մարկիկներէն Եան Նիքս Հոլմա 37րդ վայրկեանին կարմիր քարտ մը ստանալով դաշտէն վտարուեցաւ։

Ֆիլիպ Բոքս (57րդ) եւ Պուտուին Զենտէն (84րդ) նշանակեցին Այնտհոյքին կոյրերը։

Ախոյեան Այաքս Ամսթերտամ 3 - 0 արդիւնքով պարտութեան մատնելէ ետք Թիլպուրկը, բարձրացաւ 6րդ դիրքին, բայց անոր եւ պարագլուխի դիրքը գրաւող Ֆէյէնուրտի միջեւ տարբերութիւնը կը մնայ եօթը կէտ։

Յետապահ ճոն Վելտմանի եւ միջնապահ Ռիչրտ Ուիթշէի վերադարձը բարերար ազդեցութիւն ունեցաւ խումբին վրայ. արդարեւ, Այաքս, որ ուր մրցումի ընթացքին միայն վեց կոլ նշանակած էր, 9րդ մրցումին 3 կոլ նշանակեց։ Անոյտ Շուլթըն (18րդ), Թիմանի Պապանկիտա (23րդ) եւ Բիքի Մուսամփա (28րդ) նշանակեցին կոյրերը։

Ստորեւ՝ 9րդ հանգրուանի մրցումներուն թէքսիք արդիւնքները։

Ֆէյէնուրտ Ռոթերտամ - Կրոնիւկըն	3 - 1
Այաքս Ամսթերտամ - Թիլպուրկ	3 - 0
Այ Վլքսմար - Սփարթա Ռոթերտամ	1 - 2
Վիթէս Առնհայմ - Ռոտա Բերքրատ	1 - 2
Նայմիկըն - Հիլեմսվիկ	1 - 1
Վալվիք - Վոլենտամ	0 - 0
Պրետա - Էլթրէխթ	3 - 3
Փ. Ս. Վ. Այնտհոյքը - Թվենթէ	2 - 0
Ֆորթուա Սիթարտ - Տեօթինչէն	0 - 3

ԳԱՍԸՈՐՈՒՄ

	ԿԵՏ
1.- Ֆէյէնուրտ Ռոթերտամ	22
2.- Փ. Ս. Վ. Այնտհոյքը	20
3.- Ռոտա Բերքրատ	16
4.- Տեօթինչէն	15
5.- Վիթէս Առնհայմ	15
6.- Այաքս Ամսթերտամ	15
.....	
16.- Վոլենտամ	7
17.- Կրոնիւկըն	6
18.- Թիլպուրկ	5

ՔԼԻՆՍՄԱՆ. ԴԵՐԱՍԱՆ ԹԻ ՃՈՒԹՊՈԼԻՍՏ



Ընթերցողներու թատերախաղի մը տեսարանը կը յիշեցնէ Եուրկըն Քլինսմանի այս վիճակը։ Դժգոհ է։ Ի՞նչ է պատճառը։ 2է՞ կը ցած կոլ նշանակել, ճշգրիտ փոխանցում մը չ'է՞ կատարած թէ...։

Քլինսմանի դէմ բողոքները հետզհետ կը սաստկանան։ Ան պիտի կարենա՞ր տարին ամբողջացնել Պայէրն Միւնխի հետ, թէւ ան եղաւ «Հրազդան» մարզադաշտը այցելող Գերմանիոյ խումբին աստղերէն։

ՀԵԾԵԼԱՐՇԱԻ

ԼՈՆԿՕ ՊԱՀԵՑ ԱՇԽԱՐՀԻ ՄՐՑԱՆԻԾԸ

Յրանսացի ժանի Լոնկօ պահեց ճամբու վրայ ժամացոյցի դէմ մրցումի աշխարհի առաջնութիւնը, գերագանցել ետք ֆրանսացի Գաթրիին Մարտին ու խաղացի Այնտհոյքի Գաթրիին։

Աշխարհի ախոյեանութեան գծով այս մրցումները տեղի կ'ունենան Լոնկանոյի մէջ։ Լոնկօ այս մարզին մէջ կը մնայ անմրցելի։

Կ՝ՈՒԶՈՒԻ

Կ՝ՈՒԶՈՒԻ

● Հաշուապահ մը՝ օտար երկրի մը մէջ աշխատելու համար, 4 տարւան փորձառութեամբ։ Դիմել՝ հեռ. 03-719620

Կարճ ժամանակամիջոցի մէջ տիրապետեցէ՞
ՕՐԿ ՆՈՒԱԳԵԼՈՒ
Գաղտնիքին, շնորհիւ
ԱՐԱ ՔԷՔԷՃԵԱՆԻ
նոր մեքենայով դասընթացքներուն
Արձանագրութեան համար հեռաձայնէ՛ք
01-261696 եւ 03-250518:

ԿԱԹՈՂԻԿՈՍՏՈՍԱՆԻ ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՌՑ

ՎԱՅ ԳԻՐՔԻ 18-ՐԴ ՅՈՒՅՈՒՆՆԵՐԻՆ

40% ԶԵՂԶ ՎԱՅԱՐՔ

ՑՈՒՑԱՀԱՆԴԵՍԻՆ ԿԸ ՄԱՄՆԱԿՑԻՆ

ՄԵԾԻ ՏԱՆՆ ԿԵԼԻԿԻՌՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԱՐԱՆԻ, ՀԱՄԱԶԳԱՅԻՆԻ, ՏՕՆԻԿԵԱՆ, ԾԻՐԱԿ, ՍԵՒԱՆ, ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ, ԳԱՌՆԻ ԵՆ ԱՆՀԱՏԱԿԱՆ Հրատարակչատունները:

ԴՊՐԵՎԱՆՔԻ ՎԵՐԱԲԱՅՄԱՆ ՀԱՆԴԻՍՈՒԹԻՒՆ (67ԴԴ. ՏԱՐԵՇՐԶԱՆ)

Մեծի Տանն Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Դպրեվանքի ուսումնական-կրթական ԿԷ (67ԴԴ) տարեշրջանի վերաբացման հանդիսութիւնը տեղի պիտի ունենայ Երկուշաբթի, 14 Հոկտեմբեր 1996, առաւօտեան ժամը 9ին, Բրաքիոն Տունանեան հանդիսարանին մէջ:

Նախկին սաները պարտին Դպրեվանք (Պիքֆայա) բարձրանալ Չորեքշաբթի, 9 Հոկտեմբերի առաւօտուն, իսկ նոր արձանագրուած սաները՝ Հինգշաբթի, 10 Հոկտեմբերին: Վերաբացումին առիթով Սուրբ Պատարագ եւ հաղորդութիւն տեղի պիտի ունենայ Կիրակի, 13 Հոկտեմբերին, Կաթողիկոսարանի Մայր Տաճարին մէջ:

Սիրով կը հրաւիրենք միաբան հայրերն ու ուսուցիչները՝ ըլլալու Դպրեվանքին հետ եւ քաջակերելու մեր սաները, բարի եւ յաջող տարեշրջանի մը համար:

ՏԵՍՉՈՒԹԻՒՆ ԴՊՐԵՎԱՆՈՒՅ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ ԱՆՈՒԱՆ ՏՕՆԱԿԱՏԱՐՈՒԹԻՒՆ

Կիրակի, 27 Հոկտեմբեր 1996, Գլխա խաչի Կիրակի է:

Այն հաւատացեալները, որոնք կը փափաքին մատաղցու ոչխար նուիրել կամ մասնակցիլ նիւթական նուէրով, թող բարի ըլլան կապ հաստատել թաղականութեան քարտուղարութեան հետ: Հեռ. 646933/4:

ԹԱՂԱԿԱՆ ԽՈՐՀՈՒՐԴ Ս. ՆՇԱՆ ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՈՅ

ՄԱՀԱԶԴ

*Տիկին Մարիթան Կարմիրեան
Տէր եւ տիկին տաթ. Փոյ Կարմիրեան եւ գաւազուք
Տիար Ասատուր Կարմիրեան
Տէր եւ տիկին Նուպար եւ Թագուհի Մելքիսեթեան եւ
գաւազուք
Տէր եւ տիկին Հրանդ եւ Պիպի Զաւգաւաթճեան եւ
գաւազուք
Տէր եւ տիկին Հրաչ եւ Սոնիա Զաւգաւաթճեան եւ
գաւազուք
Տէր եւ տիկին Ֆէտի եւ Սիլվա Ասատուր եւ գաւազուք
եւ համայն ազգականներ կը գլուխ իրենց ամուսնոյն,
հոր, անեղոր, մեծ հոր եւ հարազատին:*

ԳԵՈՐԳ Պ. ԿԱՐՄԻՐԵԱՆԻ (Լիբանանեան, ֆրանսական եւ գոյգ Աթոռներու շքանշանակիր)

Մահը, որ պատահեցաւ Երկուշաբթի, 7 Հոկտեմբեր 1996ին, Ուաշինկթընի մէջ:

Յուզարկաւորութեան արարողութիւնը տեղի պիտի ունենայ Ուորթթ, 11 Հոկտեմբեր, Ուաշինկթընի մէջ:

- Ներկայա ընդունիլ իբրեւ ծանագ:
- Յաւակցութիւններու ընդունման բուականն ու փայլ պիտի ծանուցուին յաջորդիւ:

Faxի թիւ. - 001-703-448-1965 (Ա.Մ.Ն.):

ՅԱՅՏԱՐՈՒԹԻՒՆ

Այսու կը յայտնենք մեր հաւատացեալ ժողովուրդին. թէ Լիբանանի Թեմի Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցներու 1996-1997 դպրոցական տարեշրջանի վերանուար Կիրակի, 20 Հոկտեմբեր 1996ին է: Նոյն օրը Լիբանանի Թեմի մեր բոլոր Կիրակնօրեայ դպրոցները պիտի ընդունին իրենց աշակերտները:

Մեր ջերմ փափաքն է, որ մեր ծնողները, կրթական հաստատութեանց պատասխանատուները, եկեղեցւոյ թաղականութիւններն ու մանաւանդ քահանայ հայրերը հետամուտ ըլլան մեր նոր սերունդին կրօնական եւ ազգային տոհմիկ դաստիարակութեան եւ քաջակերէն իրենց վաւակները, աշակերտներն ու ծխականները, որ Կիրակնօրեայ դպրոց լաճախեն:

Հայց. Եկեղեցւոյ Կիրակնօրեայ դպրոցը *միջնաբերդն* է Հայաստանեայց Եկեղեցւոյ, տէր կանգնիւք այդ միջնաբերդին:

ՎԱՐԻՉ ՏՆՕՐԵՆՈՒԹԻՒՆ ՀԱՅՑ. ԵԿԵՂԵՑԻՈՅ ԿԻՐԱԿՆՕՐԵԱՅ ԴՊՐՈՑՆԵՐՈՒ

ԾԱԽՈՒ ԵՆ ԸՔԵՂ ՅԱՐԿԱՐԱԺԻՆՆԵՐ

Անթիլիաս - Պիքֆայայի մայրուղիին մօտ

- 130 քառ. մետր
- Գեղատեսիլ վայր
- 2 կառատուցով
- Վճարման դիւրութիւններ

Դիմել՝ հեռ. 03-777558 եւ 03 - 294442:

ՀՈԳԵՀԱՆԳԻՍ

ՎԻԳԵՆ ԶԻՐԻԻՍԵԱՆԻ մահուան Դ. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՓՈՔՐԻԿՆ ՊԵՐՉ ԿԵՐԶԵԱՆԻ մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Զալքայի Հայ Կաթողիկէ Ս. Խաչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10ին:

ԱՅՆՃԱՐ **ԱՅՆՃԱՐ**

ՅՈՒԿԻ ԴՈՒՐՍԱԼԵԱՆԻ մահուան Զ. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԱՆԻՑԱ ՍԵՖԵՐԵԱՆԻ (ծնեալ՝ ԿԻԼԻԿԵԱՆ) մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Եշրեֆիէի Ս. Թաղոր եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԺԻՐԱՅՐ ԼԱԼԵԱՆԻ մահուան Բ. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԱՅՆՃԱՐ **ԱՅՆՃԱՐ**

ՀԱՅԿ ՊՕՐԻԿԵԱՆԻ մահուան Ա. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Այնճարի Ս. Պողոս եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԷՄԱ ՍԻՆԱՆԵԱՆԻ մահուան քառասունցին եւ **ՍԱՀԱԿ ՍԻՆԱՆԵԱՆԻ** մահուան յիշատակին, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Անթիլիասի Ս. Գրիգոր Լուսաւորիչ Մայր Տաճարին մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՍՈՒԼԹԱՆ ԳԱՐԱԶԱՐԵԱՆԻ մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԱՆԴՐԱՆԻԿ ԴՈՒՍՈՒԹԵԱՆԻ մահուան Բ. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Պուրն Համուտի Ս. Փրկիչ եկեղեցւոյ մէջ, առաւօտեան ժամը 10ին:

ԹԱԳՈՒՀԻ ՊԱԼՊԱՐԵԱՆԻ (ծնեալ՝ ՍՈՒՐԱՏԵԱՆ) մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՄՈՎՍԵՍ ԳՈՃԱՅԵԱՆԻ մահուան Ե. տարեիցից եւ **ԱՆՆԱ ԳՈՃԱՅԵԱՆԻ** մահուան Ը. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Նոր Մարաշի Սրբոց Զատասնից Մանկանց եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՀԱԼԵՊ **ՀԱԼԵՊ**

ԵՍԹԵՐ ՍՈՒԱԼԵԱՆԻ մահուան քառասունցին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Հալէպի Ս. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԳԱՌՆԻԿ ԶԻՐԻՏՕՂԵԱՆԻ մահուան Ա. տարեիցից առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Ումէլ քաղի Ս. Զարուհի եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ՄԻՍԱԿ ԹԸԼԸՍԵԱՆԻ մահուան Գ. տարեիցից եւ **ՅՈՎՍԵՓ ԹԸԼԸՍԵԱՆԻ** մահուան յիշատակին առիթով, հոգեհանգստեան պաշտօն պիտի կատարուի Կիրակի, 13 Հոկտեմբեր 1996, Ումէլ քաղի Ս. Զարուհի եկեղեցւոյ մէջ, յաւարտ Ս. Պատարագի:

ԾԱԽՈՒ ԽԱՆՈՒԹ ԿԱՄ ՎԱՐՁՈՒ ՏԱՄԱՆՈՎ

- 3 յարկանի, «Մանքըր Պանթօ»-ի մայր ճամբուն վրայ: Հեռ. 585546:

ՎԱՐՁՈՒ ԿԱՀԱՌՈՐՈՒԱԾ ՅԱՐԿԱՐԱԺԻՆ

- Զալքայի մէջ, 3 ճեշատեան, հիւրարար եւ ճաշարան, հետաձայնով միայն: Հեռ. 260494 եւ 264267:

ԿՈՒԶՈՒԻ

- «BOU TIQUE MIKE»-ի համար ծախող օրիորդ մը: Հեռ. 260494 եւ 264267:

ԾԱԽՈՒ ՎԱՃԱՌԱՏՈՒՆ ԿԱՄ ՎԱՐՁՈՒ ՏԱՄԱՆՈՎ

- Ժէլ Էլ-Տիպի կեդրոն, 150 քառ. մետր տարածութիւն, «PICADOR» վաճառատուն: Դիմել՝ անձամբ:

ԱՆՁՆԱԿԱՆ ԴԱՍԵՐ

- Բոլոր նիւթեր՝ մինչեւ սիւնակարգի դասարաններու համար: Հեռ. 582080, ուղի՝ պրն. Սազոն:

ԾԱԽՈՒ Է

- Պորն Համուտի մէջ, առաւօտեան կեդրոն մը, 5 յարկանի: Հեռ. 261473

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Սիրանուշ Զլլորուց-Խանի մահուան առիթով, փոխան ծաղիկագանի, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նախաձեռնութիւնները:

Տէր եւ տիկին Ժորպէր Պաղտանեան 15.000 ղ. ուս. ժամ Մարտի 10.000 ղ. ուս. տիար Գրիգոր Զորուհեան 10.000 ղ. ուս. տիար Անիա Կոմիտեան 10.000 ղ. ուս. Նախալ Զոյլ 20.000 ղ. ուս. Ժորպէ Խլլը 10.000 ղ. ուս. տիկին Մարիամ Տէր Սահակեան 10.000 ղ. ուս. տիկին Ռոզին Հաղեան 5.000 ղ. ուս. տէր եւ տիկին Անիա Սրբալի-Խան 5.000 ղ. ուս. տէր եւ տիկին Յորն Բարսեղեան 10.000 ղ. ուս. Մարտիրոս-Խան քնտանիք 10.000 ղ. ուս. տէր եւ տիկին Գեորգ Զլլորուցեան 20.000 ղ. ուս. տէր եւ տիկին Միքայիլ Զլլորուցեան 20.000 ղ. ուս. տէր եւ տիկին Արմենակ Զորուհեան 5 ղ:

- Մարի Սաղանեան - Ա. յանգանի մահուան առիթով, փոխան ծաղիկագանի, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նախաձեռնութիւնները:

Տէր եւ տիկին Յակոբ Քառասնեան 10.000 ղ. ուս. տէր եւ տիկին Փիլոն Զապարեան 10.000 ղ. ուս. տիկին Անիա Զապարեան 10.000 ղ. ուս. տիկին Գրիգոր Գրիգորեան 10.000 ղ. ուս. տարբ. Կարպիս եւ Զարին Կարպիսեան 20.000 ղ. ուս.:

ՀՈՒՆԴԱԿԱՆ

1. Նեղանայ, վշտանայ - Կոնարեք ծառ:
2. Նիկիոյ ժողովին դատաւարութեան կոնարեք - Այլեր:
3. Քաղցր ու ընտիր (գիւնի):
4. Իգական տարաւուն - Թեքում, միտում:
5. Տապալ:
6. Կրկնեան ընդհանր - Արտաքսեն, վառեան:
7. Պետրոս Դուրեանի հայր - Զայնանի:
8. Սասնիկ սիրահար - Լիս:
9. Նախաճաշիկ - Նորոց (հակ):
10. Արար նախագահ - Կնքահայր:

ՈՒՆԴԱԿԱՆ

1. Յուցական ածական - Իգական տարաւուն - Կրկնեան վերեր:
2. Հիմնական կազմիչ մասնիկ (հակ):
3. Արարական դրամանի - Թատերական հանգրուան (հակ):
4. Լուսաւորութեան միջոց - Վառ գոյններով պատկան քար:
5. Ստուար (հակ) - Յուսարեկ:
6. Ամուր, տոկուն:
7. Մարտաւարութեան տեղահանելու ծառայող ծոց - Պոստահ մեծահարուստ:
8. Դրեցի - Ողիմպիական դրոշմի Ափրիկեաներ - Կապիտոլիոյ օղակ:
9. Դեմոն - Լուսաւորութիւն - Մարտաւար նստարան:
10. Ազգական, համագիր:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

- Սիրանուշ Զլլորուց-Խանի մահուան առիթով, փոխան ծաղիկագանի, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նախաձեռնութիւնները:

Տէր եւ տիկին Ժորպէր Պաղտանեան 15.000 ղ. ուս. ժամ Մարտի 10.000 ղ. ուս. տիար Գրիգոր Զորուհեան 10.000 ղ. ուս. տիար Անիա Կոմիտեան 10.000 ղ. ուս. Նախալ Զոյլ 20.000 ղ. ուս. Ժորպէ Խլլը 10.000 ղ. ուս. տիկին Մարիամ Տէր Սահակեան 10.000 ղ. ուս. տիկին Ռոզին Հաղեան 5.000 ղ. ուս. տէր եւ տիկին Անիա Սրբալի-Խան 5.000 ղ. ուս. տէր եւ տիկին Յորն Բարսեղեան 10.000 ղ. ուս. Մարտիրոս-Խան քնտանիք 10.000 ղ. ուս. տէր եւ տիկին Գեորգ Զլլորուցեան 20.000 ղ. ուս. տէր եւ տիկին Միքայիլ Զլլորուցեան 20.000 ղ. ուս. տէր եւ տիկին Արմենակ Զորուհեան 5 ղ:

- Մարի Սաղանեան - Ա. յանգանի մահուան առիթով, փոխան ծաղիկագանի, Սրբոց Քառասնից Մանկանց եկեղեցւոյ եղած են հետեւեալ նախաձեռնութիւնները:

Տէր եւ տիկին Յակոբ Քառասնեան 10.000 ղ. ուս. տէր եւ տիկին Փիլոն Զապարեան 10.000 ղ. ուս. տիկին Անիա Զապարեան 10.000 ղ. ուս. տիկին Գրիգոր Գրիգորեան 10.000 ղ. ուս. տարբ. Կարպիս եւ Զարին Կարպիսեան 20.000 ղ. ուս.:

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1									
2									
3									
4									
5									
6									
7									
8									
9									
10									

ԿԸ ՆՈՒԻՐԵՆ

1	2	3	4	5	6	7	8	9	10
1	Պ	Ա	Յ	Ո	Ի	Զ	Տ	Ի	Կ
2	Ե	Ղ	Ե	Ա	Մ	Ջ	Ի	Ր	Ո
3	Ղ	Ե	Ն	Ջ	Ա	Կ	Ր	Ա	Ս
4	Ե	Լ	Ա	Ր	Ն	Ս	Ա	Ն	
5	Ց	Ր	Ա	Հ	Ա	Ս	Ա	Ն	
6	Ի	Ս	Ա	Ր	Մ	Տ	Ի	Ր	Ս
7	Ք	Ե	Ն	Ո	Տ	Ի	Մ	Լ	Ի
8	Դ	Ե	Ր	Ա	Լ	Ե	Դ	Ե	Ր
9	Ա	Մ	Ս	Ա	Ն	Լ	Ե	Ն	Ա
10	Լ	Դ	Ե	Ր	Ա	Ջ	Ա	Հ	Ա

Թի 3503

ԽԱԶԲԱՌԻՆ

ԼՈՒՍՈՒՄԸ

